

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

պարմական գիր. թեկնածու

**ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՂԱՎԱՀՈՒՄՆԵՐ
ՆԱՅՈՑ ՆԱՅՍՄԱՎՈՒՐՔՆԵՐՈՒՄ**

Նայ Եկեղեցու ծիսական յոթ գրքերից մեկը՝ Նայսմավորքը, հավաքածու է սրբերի վարքերի և վկայաբանությունների, որոնց մեծ մասը թարգմանություն է հունական Նայսմավորքից: Ժ. դարի վերջին Կոստանդնուպոլսում հայազգի ոմն Նովսեփի թարգմանած հունական մի Նայսմավորք հիմք է դարձել Նայոց Նայսմավորքի գրեթե բոլոր խմբագրություններին¹. բացառություն կարող է կազմել, հավանաբար, Ծերենցի խմբագրությունը:

Նամաբարբառ Նայսմավորքի բնագրերի պարբերական մասնակից լինելով՝ նկարեցինք որոշ թարգմանական սխալներ և աղավաղումներ: Բնագրերում հանդիպում են նաև հայաբառ հունարեն բառեր, որոնք, ամենայն հավանականությամբ, խմբագիրը չի կարողացել թարգմանել և պահպանել է հայաբառ դարձնելով: Այդ սխալները և աղավաղումները, որոնք ունեն և՛ իմաստային, և՛ քերականական բնույթ, հերազա խմբագիրների (Ա. Անանուն, Տեր Իսրայել, Կիրակոս Արևելցի, Գրիգոր Անավարզեցի, Բ. Անանուն) կողմից հիմնականում չեն ուղղվել և նույնությամբ ընդօրինակվել են:

Սույն հոդվածի շրջանակներում համապատասխանաբար փորձ է արվում սրբագրել վերոհիշյալներից մի քանիսը՝ ըստ հեղինակի դասակարգման.

ա) Անունների աղավաղումներ

բ) Թարգմանական սխալներ, իմաստային աղավաղումներ, տարբերություններ

գ) Չթարգմանված, հայաբառ հունարեն բառեր:

Ա. Անունների աղավաղումներ

ա) *Երբ անվան սեռական հոլովածներ հայերենում դարձել է անվան ուղիղ ձև, օրինակ՝*

Դանաբրոս² - հունարեն **Դանաբոս** - Δάναξ անվան սեռական հոլովածուն է του Δάνακτος:

1 Ինչպես Նովսեփ Կոստանդնուպոլսեցու, այնպես և հայսմավորքային այլ հինգ խմբագրությունների բնագրերը պեն «Նամաբարբառ Նայսմավորք» (այսուհետև՝ ՆՆ), Ա.-ԺԲ., Յունուար-Դեկտեմբեր, Սուրբ Էջմիածին, 2008-2011:

2 «Վկայաբանության Դանաբրոսի ընթերցողի» (Նայոց Նայսմավորքի Նունվար ԻԴ-ում, ըստ հույների՝ Նունվար ԺԶ.), ՆՆ, Ա., Յունուար, Ս. Էջմիածին, 2008, էջ 262-263:

Կրիսկենդոս³ - հունարեն **Կրիսկիս** - Κρήσκης անվան սեռական հոլովածուն է՝ του Κρήσκεντος:

Նիկոնոս եւ **Նեոնոս**⁴ - հունարեն **Նիկոն** - Νίκων եւ **Նեոն** - Νέων անունների սեռական հոլովածուներն են՝ του Νίκωνος եւ του Νέωνος:

բ) *Երբ փղամարդ սրբի անունը վերածվել է կանացի անվան կամ հաղաթուկը, օրինակ՝*

Ենիմա, Ռիմա, Պիմա⁵ - Ենիմա-ն հունարեն Ինիմա - Ἰννας -ն է, Պիման հունարեն Պինիմա - Πίννας -ն է, իսկ Ռիման՝ Ռիմմա - Ρίμμας -ը: Այս աղավաղումն առաջացել է դարձյալ անունների սեռական հոլովածուները ուղիղ ձեւ ճանաչելու արդյունքում՝ του Ἰννά, του Πιννά, του Ριμμά. այս անունների ուղիղ ձևերի վերջին չ-ն սեռականում ընկնում է:

Մարաս⁶ - հունարեն **Մարա**- Μαύρα կանացի անուն է, որը սեռական հոլովածնում դառնում է Մարաս - της Μαύρας: Գրաբարում անվան ուղիղ ձևը դարձել է Մարաս՝ վերածվելով արական անվան:

Այս առումով ուշագրավ է Հոկրեմբեր ԺԷ.-ում (ըստ հույների՝ Մարտ ԺԹ.-) փոփոխվող «Վկայաբանության սրբոյն Խոռուսանթոսի, որ թարթմանի ոսկե ծաղիկ եւ ամուսնոյ խորոյ՝ սրբուհոյ Դարեհի»⁷ վերնագրում առկա անունների հարցը: Նախ՝ իրար հակասում են **սրբուհի** եւ արական **Դարեհ** բառերը: Հովսեփ Կոստանդնուպոլսեցու մոտ հունարեն **Դարիա** - Δαρεία կանացի անունը դարձել է արական **Դարեհ**, որն ընդօրինակել են գրերն բոլոր հայսմավորքային խմբագիրները: Միայն Գրիգոր Անավարզեցին ունի «...սրբուհոյն Դարիասայ, գոր Դարեհ կոչեն» փարբերակը: Այսպիսով նկատվում ենք երկու սխալ՝

1) հունարեն Դարիա սրբուհու անունը դրված սեռական հոլովով՝ **Դարիաս-της Δαρείας**:

2) Կոստանդնուպոլսեցու սխալի կրկնություն՝ **Դարիա** -ն արական **Դարեհ** անվամբ թարգմանելը:

գ) *Անունների աղավաղումներ՝ սխալ ընթերցման արդյունքում.*

Մարտ ԺԱ. (հուն. Մարտ Ժ.) «Վկայաբանություն սրբոց մարտիրոսացն Կողարիոսի, Դինգիոսի, Կիպրիանոսի, Անեքտոսի եւ Ըռեսկինդոսի»⁸ -

«Κοδράτος, Ανεκτός, Παύλος, Διονύσιος, Κυπριανός και Κρήσκεντας»:

3 «Վկայաբանություն սրբոյն Կրիսկենդոսի» (Ապրիլ ԺԲ., ըստ հույների՝ Ապրիլ ԺԵ.), ՏՏ, Դ., Ապրիլ, Ս. Էջմիածին, 2009, էջ 128-132:

4 «Յայտն աւուր կարարեցան սրով սուրբ վկայն Զրիստոսի Ալփիոն, Աղէկսանդրոս, Զոսիմոս, Նիկոնոս, Նեոնոս, Եղիորոս եւ Մարկոս» (Հոկրեմբեր ԺԳ., ըստ հույների՝ Սեպտեմբերի ԻԸ.), ՏՏ, Ժ., Հոկրեմբեր, Ս. Էջմիածին, 2010, էջ 144-145:

5 «Յայտն աւուր վկայութիւն սրբոցն Ենիմա, Ռիմա, Պիմա, որք կարարեցան ի Բրիստոս» (Փետրվար Ե., ըստ հույների՝ Հունվար Բ.), ՏՏ, Բ., Փետրուար, Ս. Էջմիածին, 2009, էջ 56-57:

6 «Վկայաբանություն սրբոյ վկային Տիմաթի եւ զուգակցին խորոյ Մարասայ» (Մայիս Գ.), ՏՏ, Ե., Մայիս, Ս. Էջմիածին, 2010, էջ 30-35:

7 ՏՏ, Ժ., Հոկրեմբեր, էջ 184-193:

8 ՏՏ, Գ., Մարտ, Ս. Էջմիածին, 2010, էջ 124-127:

Ինչպես րեանում ենք.

Կողրատուր դարձել է Կողրատ/ու, Անեկտուր՝ Անէթրու, Դիոնիսիոսը՝ Դինգի-
նու, Կրիսկենիւրաւը՝ Ըռեսկինդու: Նշենք նաեւ, որ Պավոս անունը հայերենում բա-
ցակայում է:

Կամ Ապրիլ Լ. (հուն. Նունիս Ե.) «Վկայաբանութիւն Ժ. մարտիրոսացն՝ Մար-
կիանու, Նիկանդորու, Ապողոն, Դետուրու, Արիու,

«Μαρκιανός, Νίκανδρος, Υπερέχιος, Απόλλων, Λεωνίδης, Άρειος,

Գորդոն, Պերիոք, Սեդինադ, Երինէ, Պապոնրոն»⁹ -

Գորցիւս, Տէղնիւս, Եւրհիւս Կալ Սաւթան»:

Նիկանդորու դարձել է Նիկանդորու, Իպերիքիոսը՝ Պերիոք, Գորգիաւր՝ Գոր-
դոն, Սեդինիւրաւ՝ Սեդինադ, Պամոնրը՝ Պապոնրոն:

Բ. Թարգմանական սխալներ, իմաստային աղավաղումներ, փարբե- րություններ

ա) *Նունիս ԺԳ. (հուն. Նունիս Ժ.) «Վկայաբանութիւն սրբոյն Տիմոթէո-
սի, որ ի Պռուսայ»*¹⁰ բնագրում հանդիպող որոշ թարգմանական անճշտու-
թյուններ:

Պռուսայի եպիսկոպոս Տիմոթէոսը (300-361) նահապարկվել է Նուխանու Ուրա-
ցող կայսեր օրոք: Նա իր աստվածահաճո եւ հույժ բարի վարքով օժտված էր հրա-
շագործ շնորհով, որի օգնությամբ սպանում է այն մարդակեր վիշապին, որն առ ու
սարսափի մեջ էր պահում ողջ Պռուսա քաղաքի բնակչությանը:

1) «Եւ ընդ առուսն ընդ այնոսիկ կին մի թագուհի, որոյ անուն էր **Առիւրա**,
քրիստոնէայ հաւարով: Եւ բնակէր ի քաղաքին Ապողոնիա: Եւ լսէր վասն ազգրա-
կար ջերմային ջրոցն՝ զնաց բնակիլ անդ»¹¹:

Թագուհի կոչումը եւ **Առիւրա** (կամ **Առիւրէ**, **Առեւրէ**) անունը թարգմանական
սխալի հետեւանք են: Նունարեն հին հայսմավորքներից ոչ մեկում չի տրվում կնոջ
անունը, այլ պարզապես նշվում է նրա քրիստոնյա եւ աստվածապաշտ լինելը: Նույն
սրբագիր Նիկողիմոս Այիորիփիսի Նայսմավորքում (1805-1807 թթ.)¹² ասվում է,
որ նա այդ ժամանակվա Բյուրանիայի թագուհին էր, որը Ապողոնիդա քաղաքից
եկել էր Պռուսայի բուժիչ հանքային ջրերը: Նույն Օրթոդոքս Եկեղեցու Նոր Նայսմա-
վորքում հիշատակվում է աստվածահարգ կնոջ անունը՝ Վասիլիսա «μία θεοσεβή
γυναίκα, όνόματι Βασίλισσα»¹³: Նովսեփ Կոստանդնուպոլսեցին կնոջ Վասիլիսա
անունը, որ թագմանաբար նշանակում է թագուհի, ընկալել է որպես փխրոս: Նայ-

9 Մ. Դ., Ապրիլ, Ս. Էջմիածին, 2009, էջ 288-289:

10 Մ. Զ., Յունիս, Ս. Էջմիածին, 2011, էջ 128-131:

11 Մ. Զ., Յունիս, էջ 128:

12 Sté N. Agyropeitēs, Συναξαριστής των δώδεκα μηνών, τ. 5, Μάιος - Ιούνιος, Θεσσαλονίκη, 1993, էջ 205:

13 Անդ:

կական Հայսմավորքում նրան վերագրված Առիպա անունը արդյունք է հունարեն արևրեն - **αρπτή** = առաքինի ածականի՝ հայրուկ անվան վերածման:

2) «Եւ երբուն ցնա այծենի ծածկոց եւ առաքեցին իբրեւ գօրհնութիւն Առիպայի թագուհոյն»:

«Այծենի ծածկոց» -ը հունարեն *τὸ κάλυμμα* կամ *τὸ σκέπασμα τῶν ὄρων* բառերի սխալ թարգմանությունն է: Համաձայն հայկական բնագրի՝ Պրոսպայի եպիսկոպոսն ու քահանաները այծենի ծածկոց են փալիս Տիմոթեոսին, որպէսզի նա, որպէս օրհնություն, այն փանի եւ նվիրի այդ կնոջը: Ինչպէս գիտենք, այծենին հիմնականում օգտագործում էին հոգևորականները, հապկապէս անապարականները, այդ իսկ պատճառով դժվար թէ Թագուհուն այծենի ուղարկէին: Հունարեն հայսմավորքներից մեկում ասվում է, թէ Ս. Պապարագից հետո հավաքագլուխներից ոմանք Տիմոթեոսին խնդրում են վուշի թելից գործած ծածկոցի - *σὲ ἔνα λινὸ κάλυμμα* մեջ փաթաթված նվերները Թագուհուն փանել¹⁴: Վաղ շրջանի հունական հայսմավորքներում¹⁵ ծածկոցի փոխարեն օգտագործվում է *τὸ σκέπασμα τῶν ὄρων* կամ *τοῦ τῶν ἱρώων ἄρων καλύμματος* - Սուրբ Հացի ծածկոց փաթեղակը:

Ուրեմն՝ այծենի բառը սխալ թարգմանություն է եւ ավերորդ:

3) Ուշադրություն դարձնենք նաև բնագրային մի փաթեղության վրա: Հունական հայսմավորքների բոլոր խմբագրություններում¹⁶ նշվում է, որ մարդակեր վիշապն ապրում էր քաղաքի բնակիչ ճանապարհի եւ հայրենի Պրոսպայի հանքային ջրերով հարուստ բաղնիքների միջև գրկվող մի քարայրում, որի մոտ **կիպարիսի** շար գեղեցիկ ծառ էր աճում: Հայոց Հայսմավորքի բոլոր խմբագրություններում կարդում ենք հետևյալը. «Եւ ծառ մի նշարենի բնամեծ էր ի մէջ քաղաքին Պրոսպայ, յորում են ջերմուկք: Եւ յարմար ծառոյն բնակէր վիշապ մի անհառոր, եւ էր մերձ քարայր մի եւ յերեկոբեա երանէր վիշապն եւ մրանէր յայրն եւ զգիշերն անդ բնակէր»¹⁷:

բ) Հուլիս ԻԱ. «Վարք երանելոյն Սիմեոնի, որ վասն Քրիստոսի աղաւաղանայր, եւ երանելոյն Յոհաննու անապարականին»¹⁸:

1) Համաձայն Հայոց Հայսմավորքի՝ Սիմեոնը եւ Հովհաննեսը Ասորիքի Եդեսիա քաղաքից էին, որոնք իրենց ծնողների՝ Հովհաննեսն իր հոր, իսկ Սիմեոնը մոր հետ, որոշում են Սուրբ Խաչի փոսին գնալ Երուսաղեմ: Հորդանանում Սիմեոնն ու Հովհաննեսը որոշում են հրաժարվել իրենց ընդհանրությունից եւ վանական դառնալ: Այդ որոշմամբ նրանք գնում են Հորդանանում գրկվող Սուրբ Գերասիմոսի վանքը եւ այնտեղի վանահոր ջերմ ընդունելությանն արժանանում: Այսպէս, ըստ հայ հայսմավորքային խմբագիրների, Սիմեոնն ու Հովհաննեսը գնում են Ս. Գերասի-

14 Տե՛ս *Μ. Συμωνοπερίτου*, *Νεος Συναξαριστής της Ορθόδοξου Εκκλησίας*, τ. 10, Ιούλιος, Αθήνα, 2008, էջ 126:

15 Տե՛ս *H. Delehaye*, *Synaxarium Ecclesiae Constantinopolitanae*, Bruxellis, 1902, էջ 742-743:

16 Տե՛ս “*Menologium Graecorum Basilii Porphyrogeniti Imperatoris Jussu Editum*”, том. 117, Мѣся Ію́нιος, էջ 493:

17 Ձեռագիր Վիեննայի Մխիթարյան վանքի Մարենադարանի, հմր. 1048:

18 ՀՀ, Է., Յուլիս, Ս. Էջմիածին, 2011, էջ 222-233:

մոսի վանք, որսրել նրանց ընդունում է Գերասիմոս անունով վանահայրը: Նունական հայսմավորքների թե՛ հին, թե՛ նոր շրջանի բոլոր խմբագրություններում ասվում է, որ Սուրբ Գերասիմոս վանքում նրանց ընդունողը Նիկոն անունով վանահայրն էր. «...ἔφτασαν εἰς τὸ Μοναστήριον τοῦ Ὁσίου Γερασίμου, εἰς τὸ ὁποῖον ἦτο εἷς ἐνάρετος ἄνθρωπος, Νίκων ὀνομαζόμενος»¹⁹: Այսինքն՝ Հայոց հայսմավորքներում վանահոր Նիկոն անունը կրկնագրության հերեւանքով սխալմամբ դարձել է Գերասիմոս:

2) «Եւ եցոյց նոցա Աստուած Սիմէոնի գմահ մարն իւրոյ, եւ Յոհաննու գմահ ամուսնոյն, եւ գոհացան զԱստուծոյ»:

Նավանաբար, հայ թարգմանչի՝ հունարենի համապատասխան հարվածի կրճատումով առաջացել է բնագրային զգալի փոփոխություն: Նունարենում ասվում է, որ անապատում ճգնության ժամանակ Սիմեոնին եւ Նովիանենսին փանջում էին մոր եւ կնոջ մասին հիշողություններն ու երազները, սակայն նրանք հիշում էին Նիկոնին փված իրենց խոսքումը եւ հաղթահարում փորձությունը՝ միասին աղոթելով, որի համար ուրախանում էին եւ գոհություն փայլա Աստծուն:

3) Մեկ այլ փոփոխություն ենք նկատում նաեւ այն հարվածում, ուր խոսվում է Սիմեոնի՝ անապատից Եդեսիա գնալու եւ հիմար ու ծիծաղելի արարքներով մարդկանց ճշմարտությունը ուսուցանելու մասին: Հայկական հայսմավորքային բոլոր բնագրերում ասվում է. «Էջ ի լեառնէն եւ գնաց յԵրուսաղէմ, երկիր եպագ գերեզմանին Տեառն եւ յայլ սուրբ տեղեացն... Գնաց յԵրուսաղէմ ի քաղաքն...»: Նունարեն բոլոր բնագրերում ասվում է, որ նախ Սիմեոնը իջավ Երուսաղէմ՝ Տիրոջ գերեզմանին երկրպագելու, որից հետո վերադարձավ հայրենի քաղաք Եդեսիա. «ἔπῃγεν εἰς τὴν Ἑδεσσαν»²⁰: Այն, որ նա իրապես Երուսաղէմից վերադարձել է հայրենի Ասորիք, վկայում է նաեւ Սիմեոնի վարքում գուշակվող երկրաշարժի վերաբերյալ դրվագով, երկրաշարժ, որը տեղի է ունեցել Ասորիքում 588 թ.:

Գ. Զթարգմանված, հայապատ հունարեն բառեր

Այս երեւույթը հանդիպում է ինչպես Նովսեփ Կոստանդնուպոլսեցու, այնպես էլ Հայոց Հայսմավորքի մյուս խմբագրություններում, որոնք հավանաբար մուրք են գործել այլ աղբյուրներից, օրինակ.

ա) Մեպրեմեր Ա.-ին տրոմվող սուրբ Սիմեոն Սյունակեցու վարքում՝ «Սիմեոնի Սիւնակեցին յիշարակ Մանդրան ի Նալեպ»²¹ Նովսեփ Կոստանդնուպոլսեցին չթարգմանելով եւ հայապատ դարձնելով՝ պահպանել է հունարեն մանդրա - η μάνδρα - փարախ կամ մակաղարելի բառը, որը Դ. դարից սկսած փոխաբերական իմաստով գործածվել է վանական հաստատության համար: Այսինքն՝ վայր, որտեղ ապրում է Հիսուս Քրիստոսի հոգևոր հոփը, հոգևոր գառները, հերեւաբար՝ հիշա-

19 Μ. Λάγγη, Ο Μέγας Συναξαριστής της Ορθόδοξου Εκκλησίας, τ. Ζ', Αθήναι, 2001, էջ 386:

20 Μαργαρίτιος Μάξιμος, Επίσκ. Κυθήρων, Βιοί αγίων εκ της ελληνικής γλώττης ήτοι εκ των συναξαρίων μεταφρασθέντες, Βενετία, 1621.

21 Մ. Ա., Մեպրեմեր, Ս. Էջմիածին, 2010, էջ 6:

դրակ Սիմեոն Սյունակեցու, որ էր Նալեայի վանական հասարակությունում: Ի դեպ, Նովսեփ Կոստանդնուպոլսեցուց օգտված հայսմավորքային բոլոր հեղինակները ընդօրինակել են մանդրան բառը:

բ) Փեպրվար ԺԷ.-ին րոնվող Սուրբ Թեոդորոսի վկայաբանությունից հետո Տեր Իսրայելը պահպանել է «Ծանուցից սակաւ մի վասն քաջութեան յաղթող վկային Թեոդորոսի»²² բնագիրը: Նույն պարմության մի այլ խմբագրություն պահպանել է Կիրակոս Արեւելցին՝ «Վասն վիշապին, գոր եսպան սուրբն Թեոդորոս» վերնագրով²³:

Նամաձայն հունական Նայսմավորքի՝ երբ Սուրբ Թեոդորոսն իր երիվարը հեծած գնում է Եւքայիւրա, իմանում է, որ այնքեղ անբառում մարդակեր վիշապ է բնակվում, որի հանդեպ ունեցած սարսափից րեղի բնակիչները լքել են իրենց րնէրը, բացի Եւսեբիա անուով մի քրիստոնյա կնոջից: Նա որոշում է մրնել անբառ եւ սպանել վիշապին: Երկար շրջերուց հետո սասարիկ հոգնում է եւ շեղվելով անբառից՝ իջնում է ձիուց փոքր-ինչ հանգստանալու: Այս կապակցությամբ Տեր Իսրայելի Նայսմավորքում ասվում է. «Ընդ այն ժամանակս լինէր երանելոյն Թեոդորոսի ընդ պրասարին եւ անցանել ընդ ճանապարհի յԵւսեբիայ՝ ընդ կնոջ այրույ, առ ի պէրսս ինչ իւր գործոց եւ ուժգին եղեալ րաւթոյն խորհեցաւ հանգչել ընդ պրասարին Եւսեբիայ մարգճակին»²⁴ եւ կոչէր Ախտրեայ: Եւ կապեալ գձին հանգեաւ ընդ հովանեաւ րնկւոյն»: «Ընդ պրասարին» բառակապակցությունը գալիս է հունարեն *τὸ πρᾶσον* կամ *πρασιὰ* բառից, որ նշանակում է ծաղիկների թումբ կամ մարգ: Կիրակոս Արեւելցու բնագրում այն թարգմանված է՝ «...րեղի մի ծաղկաւէր եւ ծառս»:

Տեր Իսրայելի Նայսմավորքում Եւքայիւրա - *Εὐχάιτα* անունն աղավաղվել է եւ դարձել Ախտրեա՝ «եւ կոչէր Ախտրեայ»-ն, մինչ Կիրակոս Արեւելցու բնագրում անվանաձեւը՝ «Եւխասրիա», ավելի մոտ է հունարենին:

գ) Գրիգոր Անավարզեցու Նայսմավորքի Սեպտեմբեր Բ.-ին հիշարակվող «Յայսմ աուոր յիշարակ է սրբոյն Յոհաննու Պահեցողի Կոստանդնուպոլսի հայրապետի»²⁵ վարքում, Պահեցողի խիստ ծոմապաշտության մասին ասվում է. «Ջի աաի ընդ այրոց գործոց նորա եւ այս, զի Ջ. ամիս առանց հացի եւ ջրոյ եկաց, այլ յամենայն աուոր բաւականանայր միով կաւ լի սկիւ եւ միով թրի դակինիսի»²⁶»: Այստեղ կավ լի սկիւ-ը հունարեն *έν καυλίσκῳ* -ն է, որ նշանակում է ցողուն, իսկ թրի դակինիսի-ը՝ *έν ὀριδακίνης*-ն է, որ նշանակում է հազար՝ մարդ: Այսինքն՝ Սուրբ Նովհաննեսը ամեն օր բավականանում էր մեկ ցողուն եւ մեկ հազար ուրերով:

Կարծում ենք, որ վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ հայ հայսմավորքային բնագրերը կարիք ունեն հանգամանալից բնագրագիրական ուսումնասիրության եւ սրբագրումների:

22 Մ. Բ., Փեպրուար, Ս. Էջմիածին, 2009, էջ 210-212:

23 Անդ, էջ 211-213:

24 ջրատար մարգագետին, ճահճային եւ դալարավեր րեղ:

25 Մ. Բ., Սեպտեմբեր, Ս. Էջմիածին, 2010, էջ 31-32:

26 Ձեռագիր Վենետիկի Սյոթրայան վանքի Մարենադարանի, հմր. 710, 6բ-7ա, 402, 14բ, ՄՄ 7361, 240ա-բ: